ԱՍՈՒԼԻՍ

ԱՐՑԱԽԸ ՄԵՐ ԱՋ ՈՏՔՆ Է, ՈՐՈՎ ՊԵՏՔ Է ՄԵԿ ՔԱՅԼ ԱՌԱՋ ԳՆԱՆՔ

Երեկ «Հայացք» ակումբի հյուրն էր ՀՀ վաստակավոր արտիստ, Վաշինգտոնում գործող «Արքա» բալետի գեղարվեստական ղեկավար, բալետմայստեր Ռուդոլֆ Խառատյանը: Նա շուրջ 20 տարի բացակայում է հայրենիքից, Վաշինգտոնում հիմնել է «Արքա» բալետի խումբը, ներկայացումներ է բեմադրում, բալետի դասեր տալիս: Նա ամեն տարի ամռանը լինում է հայրենիքում, բայց այս տարի գործով է եկել: 20 տարվա ընդմիջումից հետո առաջին անգամ հայրենիքում բալետային բեմադրություն է դրել՝ «Վարդանանք», որի պրեմիերան կկայանա այսօր՝ Օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում: Ներկայացման երաժշտությունը գրել է կոմպոզիտոր Էդգար Հովհաննիսյանը, մենակատարն է Ռուբեն Մուրադյանը: Ներկայացման սյուժեն Վարդանանց պատերազմի նախորդ օրն է՝ զորավար Վարդանը հրաժեշտ է տալիս կնոջը, իսկ կռվի դաշտին բալետմայստերը սիմվոլիկ մեկնաբանություն է տվել. Վարդանը բեմում մենակ պարում է՝ այդ կերպ արտահայտելով իր պայքարը: Ներկայացման վերջը նույնպես սիմվոլիկ կուլմինացիա ունի՝ հայտնվում է Տիգրան Մեծը, բարձրացնում է սուրը: Տիգրանի կերպարով Ռ. Խառատյանը փորձել է ներկայացնել Հայաստանի վերականգնումը, հզորացումը: Ռ. Խառատյանը ցավով է խոսում Հայաստանում այսօրվա բալետի վիճակի մասին. «Հայաստանը շատ մեծ բալետի դպրոց ուներ, ես հիմա ցավով եմ նայում, որ այդ դպրոցից գրեթե ոչինչ չի մնացել: Հայաստանը չի ինտեգրվում այսօր աշխարհում կատարվող մշակութային գործընթացներին, մի բան, որը այս էլ երկու տարի է՝ Վրաստանը ջանասիրաբար փորձում է անել, ինչին ես նախանձով եմ նայում: Երբ նոր էի եկել Երեւան, ինձ թվում էր՝ երեք շաբաթում ներկայացումը կբեմադրեմ, բայց եկա տեսա ի՞նչ՝ երիտասարդ պարողներն անհավես են, ոչ ուզում են աշխատել, ոչ ուզում են սովորել, ծուլանում են: Ես հասկանում եմ՝ դրա պատճառը նաեւ այն է, որ չնչին գումար են ստանում, բայց, հավատացեք, դրսում էլ այդքան հեշտ չէ: Դրսում աշակերտներ ունեմ, որ դասից հետո գնում-մատուցող են աշխատում, եւ, ընդհանրապես, ամբողջ Ամերիկան ամեն օր ապրում է խուճապի մեջ՝ վաղը աշխատանք ունենալո՞ւ է, թե՞ չէ, եւ հենց այդ վախի ու օրինականության շնորհիվ է այդ երկիրը առաջ գնում: Երբեմն այնպիսի խոր ցավ եմ ապրում, որ օտար երեխաներին եմ սովորեցնում, բայց նրանք գալիս են ակտիվ, անընդհատ ուզում են քեզանից ավելի շատ բան սովորել: Այստեղ սկզբում երբ եկա, իմ եւ երիտասարդ պարողների միջեւ միանգամից պատ առաջացավ: Չգիտեմ ինչից էր՝ գուցե ես միանգամից փորձեցի ավելի շատ բան տալ, գուցե նրանք պատրաստ չէին: Բայց այդ պատն աստիճանաբար, աշխատանքի շնորհիվ քանդվեց: Մեր երեխաներն այնպիսի հզոր պոտենցիալ ունեն, որ իրենք էլ անգամ չգիտեն՝ ինչի են ընդունակ, ուղղակի նրանց աշխատեցնել է պետք: Հուսով եմ՝ դա ինձ հաջողվեց անել, հուսով եմ՝ այս ներկայացմամբ ես ինչ-որ կայծ, լիցք տվեցի նրանց: Ու հիմա ավելի լավատեսական եմ տրամադրված հայկական բալետի ապագայով»:

Լրագրողներից մեկի՝ հարցին՝ արդյոք ճի՞շտ է, որ Բիլ Քլինթոնի աղջիկը նրա մոտ է բալետ պարել սովորել, բալետմայստերը պատասխանեց. «Այո, բայց դա այստեղ է արտառոց բան թվում, այնտեղ՝ դասարանում, նույնիսկ շատերը երկար ժամանակ չգիտեին էլ, որ նա Բիլ Քլինթոնի աղջիկն է: Մի օր Քլինթոնը եկավ դստեր պարի դպրոց՝ շնորհակալություն հայտնեց ինձ՝ իր աղջկան լավ պարել սովորեցնելու համար, մի երկու անգամ էլ նա եւ իր կինը ինձ ու կնոջս հրավիրել են Սպիտակ տուն»:

Մեր այն հարցին, թե արդյո՞ք Ռ. Խառատյանը տեղյակ է հայաստանյան քաղաքական իրավիճակին, նա պատասխանեց. «Պարտադիր ամեն օր կարդում եմ հայաստանյան թերթերը: Գիտեք, ես միշտ այսօր կատարվող իրադարձությունները համեմատում եմ անցյալում տեղի ունեցած դեպքերի հետ: Մեր երկրում միշտ այսպիսի ներքաղաքական խառը իրավիճակ է եղել, ինչից օգտվել են դրսի ուժերը, եւ մենք ամեն անգամ տարածք ենք կորցրել: Պատկերացրեք՝ Հայաստանը մի մարմին է, որի միայն ստամոքսն էր աշխատում, որովհետեւ սոված մարմին էր, հետո, երբ մենք գրավեցինք Արցախը, իսկ Արցախը դա մեր աջ ոտքն է, որով պետք է մեկ քայլ առաջ գնայինք, այսօր նորից իրար դեմ ենք դուրս եկել, ու եթե Արցախը կորցնենք, նորից Հայաստանի միայն ստամոքսն է աշխատելու»:



Աշխեն
ՔԵՇԻՇՅԱՆ
ashkhen@hraparak.am